

ԻՄ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Ա Ա Է Ք Ս Ա Ն Գ Ր Ա Պ Օ Լ Ի Ց Ա Ա Ր Ա.

(Շարունակ. տե՛ս Ուրբաթ Բ. Գ.)

ԺԱ.

Ղարբի գործը կարճ էր: — Տեղացի մեծագույնները և նոյն ունեւորները խոստովանեցին: — Կարծես ինչպէս զորքերի համար որքան ժամանակ էր և իր պարսկական տեսչից ինչպէս ուր ժողովի մի անդամներ:

Ինչպէս Ղարսը դէպի ինքն է հրապուրում վաճառական բազմախնդիրներին, այնպէս ևս գաւառը՝ հողապուրկ երկրագործներին: Ղարսի հողերը գաղթել գիւղացու համար կեանքի խնդիր է դարձել: Ազգայական բարբարոսութեանց մատնուած Իսրայէլացիք այնքան ուրախ չէին իրանց խոստացուած աւետեաց երկիրը գաղթելով, որքան գիւղացին ուրախ էր Ղարսայ հողը մշակելով: Ես արդէն խօսել եմ թէ գիւղացին որքան կարիք ունի հողի: Առկատու կառավարչապետը այս կողմերը պատահած ժամանակ տեղական խնդիրներից ամենամեծ մասը եղել է դէպի Ղարսի հողերը գաղթելու համար: որին ի պատասխանի երբոր կառավարչապետը ասել է գնացէք սե՛ ծովը (սե ծովի դատարկ երկրները), ժողովուրդը կարծել է թէ կառավարչապետը զայրացած անիծում է. դու մի ասիլ՝ գնա կամ գնացէք սե ծովը՝ տեղւոյս սովորական անէծքներից մինն է եղել: Ժողովուրդը պատճառ ունի Ղարսայ հողերի վերայ աչք ունենալ. որովհետև Տաճիկների գաղթելուց յետոյ ընդարձակ գետիններ պարապ մնալով խոպանանումն. իսկ մնացած մի քանի ազդեցութեան տէր մահմեդականներ աշխատումն այդ գետինները գրաւել իրրե իրանց կալուածք:

Մենք պատահամք առիթ ունեցանք լսելու կալուածական գործերի համար սարգուած մասնատողովի մի անդամից որ, Տաճկաց ժամանակով եղած հողային կալուածագրերը մեծ մասամբ շինծու և աղաւաղուած են. օրինակ—մինը կամեցել է ընդարձակել իւր սահմանը, կալուածագրի (թափիի) լուսանցքում սկսել է քէֆը ուզածին պէս յաւելումներ անել, և իսկական կալուածագրի անհամոյ բառերը ջնջելով, նոցա տեղը համոյականը դնել: Որչափ էս գիտեմ, մահմեդական աշխարհներում ցեղական ազնուականութիւն չըկայ: Ամենայն դք իւրաքայրըութեամբ և խելացութեամբ կարող է միշտ բարձրանալ. գզրի որդին կարող է փաշայ դառնալ, վերջին բախկալը կարող է իսան դառնալ. այդ այնքան հասարակ բան է, որ հազարաւոր դէպքերի մասին խօսք է լինում և յառակս դարձած է: Մահմեդական աշխարհներում նոյնպէս մատանդական կալուածներ չըկան, այլ տէրութիւնը իւր հպատակների

արմտեաց դասանորդը կապալով տալիս է զանազան մարդոց. այս դեպ-
քից օգուտ են քաղում ինքեանք կառավարիչները կամ սոցա ձեռքով
իրանց ծանօթ բարեկամները յատկապէս պարգևները ի նկատի ունելով.
այնպէս որ այդ կապալառուները ամեն նոր եկած կառավարչի հետ
գործը կարգի զնելով մինչև անգամ որդւոց յորդիս կապալառու են
մնում. այս կարգիցն է և Խաթուն օղլի կոչուած մի ցեղ, որ բաւական
ժամանակ արեմտեան Շիրակի մեծ մասին կարգադրիչ և հարկահաւաք
է կարգուած. Բայց ես հետզհետէ հեռանումեմ ուղեգրութեան սահ-
մանից.

ԺԲ.

Ղարսը ի նշան: — Հ. Կէրեղի եւ Նարդուր-Նի-նը: — Ղարս քեղը և Նարս հունը
պատմութեան իր ճեղքով: — Ղարս, վիճակը և Նարս քեղերը: — Ի՞նչ բնութեամբ
Ղարս, Անգլո-թուրքի: — Մեր Ղարսի քաղաքը: — Ղարս քաղաքը և Սարս
Կարգիտի ստորագրութեամբ: — Մեր Ալեքսանդրոս Ժամանակը: — 1881 թուի մի
պատմութիւն իր ներքին իր ներքին: — Ի՞նչ կըսենք ստորագրութեան
— Երբեք նիւթագործութեանը.

Նախ քան իմ նկատողութիւնների վերջացնելը, ներելի լինի ինձ մի
քանի խօսք էլ զրուցել Ղարսի մասին. Ղարսը կամ հին Վարսը ընդ-
րապէս յայանի է մեր պատմութեան մէջ Բագրատունեաց հարստու-
թեան օրով, իրրեւ մի տեղ, ուր թագաւորի եղբարքը կամենալով իրանց
փառասիրութեանը յագուրդ տալ, ապաստանում էին և իրանք իրանց
թագաւոր էին անուանում. Ղարսը կամ Վարսը հին Վանանգ գաւա-
ռումն է որ սահմանակից է Շիրակին, Վանանգի մայրաքաղաքը —
Վարսը Շիրակի մայրաքաղաքից — Անուց հազիւ 30 վերստ հեռի լինի.
սակայն երկուքն էլ արքայանիստ էին իրանց ժամանակին, երկուքի
թագաւորներն էլ եղբայրներ էին հարազատ, բայց միմեանց հակառակ.

Հ. Կիւրեղ Ինձիճեանի ստուգաբանութիւնը բանաւոր չհամարելով
ինքն ենթադրումէ որ Վարս ճիշտ հայերէն բառ է և կնշանակէ ոյժ.
կարողութիւն. Հ. Կիւրեղ իւր ենթադրութիւնը հիմնումէ հայկական
լեզուի մի առանձնայատկութեան վերայ, որ զոյգ նշանակող բառերը
միշտ անեղական են լինում, ասումէ, որովհետև Վարս քաղաքը շին-
նուած է երկու լեռների վերայ և մի ամրութիւն է ներկայացնում հե-
տեաքար և կոչվումէ Վարս փոխանակ կարք կոչուելու. և այս այն հի-
մամբ՝ որով կոչվումեն Մասիսը, Արտագերսը, Ագուլիսը ևլն. Հ. Կիւ-
րեղ ասումէ, ըստ Խորենացւոյ Վաղարշակայ օրով այժմեան Ղարսայ
գաւառը յանուն Վնդայ կոչուել է Վանանգ. իսկ Վիրգիլիոսի գրածին
նայելով՝ Վարս է կոչուել Օգոստոսի օրով. Մէջ է բերում Վիրգիլիոսի
խօսքերը Հիւրմիւղեանի թարգմանութիւնից, Յայանի է պատմութիւնից
որ Վաղարշակ Օգոստոսից գրեթէ մի դար և աւելի առաջ է. եթէ ան-

փայտ Բասենոյ գաւառը յանուն Վնդայ Վանանդ կրկոչուէր, կարող էր նորա մէջ մի քաղաք էլ շինուել և Վարդ կոչուել և համբաւ ստանալ Օգոստոսի օրով, կամ առանց այժմեան Վարսը նշանակելու մի ուրիշ երկրում ուրիշ ցեղի կամ երկրի անուն լինիլ Օգոստոսի օրով, Վերգելիոս Օգոստոսի գործերը ներբողելով՝ յիշում այն բոլոր ազգերի ու երկրների անունները, որոնց Օգոստոս նուաճել էր. ըստ այսմ.

Յերկայնաձիգ գնան ի կարգ ալզ նկունք,

Ելլարարբառք, ի դէն ի ձևս անհանդոյնք,

Աստ ստուածոյն ընդ նոմադիցն ի պատկեր

Ձաղգս անգօտեաց ասիրկեցւոց ածեալ էր,

Եւ անդ ընդ Վարս և ընդ լելէզս ի նկար

Ձքաջաղեղանցն գեղոնից զճամբար,

Մեղմիկ այիքն անդ Եփրատայ հոսեին

Անդ հեռագին ազգ ի բնակիչս մորին,

Երկեղջիւրն Հոննոս և Տայք աննկունք

Եւ Երասխայն ի կամրջաց ըմբոստ հունք,

Է Վիւրեղ Վարսը ուղղակի այժմեան Վարուց սահմանն է համարում քեզմէր ուղղակի Գեղամեան, Մարտը համարումէ Մասի հիւսիսային արևելեան ստորոտումն իրան ենթադրած Մարտը, մինչդեռ Մասի հիւսիսային արևելեան ստորոտում մորեր չըկան այնքան նշանաւոր՝ որ յիշելի լինէին Օգոստոսի գործերի մէջ, Հոննոս գետը համարումէ Գուգարաց աշխարհից անցնող խրամոսն (?) կամ խրամն, որ խառնվումէ Վուր գետին. Տայքն էլ համարումէ ուղղակի Երասխայք. ըստ իս ինչպէս Մարտը Եփրատից ածականն է, նոյնպէս էլ Վարսը գետն է և գեղոնից (գեղեցիկ) բառերը ածական համարելի են զճամբար բառի զօրութեամբ մնացած յասկացուցին, և ոչ թէ գեղոնից Գեղամեանց տեղը ընդունել, որ պատմութեան միջից գրեթէ անհետացել էր և տեղը գործ էր ածվում Սիւնեաց բառը, Եփրատն ու Երասխը Հայաստանի գետերն են, իսկ Հոննոսը Եւրոպայի Հոննոս գետն է, որ ընկնումէ Գերմանիայի մէջ, Աշխարհագրական անունները Հոնովայեցւոց կայսերութեան սահմաններն են ցոյց տալիս: Է Վիւրեղ աշխատել է Վիրգիլիոսի այս հատուածի մէջ եղած բոլոր անունները Հայաստանի մէջ տեղաւորել*, Բայց ուր պատմութիւնը և աշխարհագրութիւնը կան խնդիրը լուծելու, բոլոր պատճառաբանութիւնները հրրորդական նշանակութիւն են ստանում:

Վարսայ գետը իսկապէս յայտնի չէ թէ հնումն ինչ էր կոչվում. մեծագոյն մասին հաւանական կարծիքն է, որ Վարսայ գետը կոչվումէր Ախուրեան, կան որ այդ գետը համարումեն Ռահ գետը, Վերջա-

(*) Արարատ 1879 թ. երես 358-359:

պէս Անիի Ախուրեան գետի երկու մեծ ճիւղերից մինը զրկվումէ անուշից, երբ որ Ախուրեանը յատկացնումենք մէկնումէկին, Այդ երկու մեծ ճիւղերը կոչվումեն մինը Աարսայ չայ, որ Աարսից անցնելով Արդինայի մօտ մտնումէ Շիրակ և գալիս է մինչև մեծ լաւազանը, որ յայտնի է Ախուրեան անունով, իսկ միւսը՝ Արփայ չայ յանուն այն լճին՝ որից սկիզբն է առնում և Ալէքսանդրապոլի արեւմտեան կողմից անցնելով Շիրակի դաշտը երկու է բաժանում, արևելեան և արեւմտեան, Արփաչայն ևս ընկնելով հին Ախուրեանի աւազանը, կոչվումէ ըստ հնոյն՝ Ախուրեան, քայց ըստ արդի խօսից՝ Արփաչայ:

Է. Կէւրեղ Արփաչայի կամ Ախուրեանի խորածորի միջով անցնելը մարդկային հնարագիտութեան արդիւնքն է համարում և հոգածութեան հետեանք*), սակայն մեր նախնիք դժուար թէ այնքան հոգս անէին գետերի ընթացքներին ուղղութիւն տալու. ըստ իս՝ արել է բնութիւնը ինչ որ կամեցել է. մի տեղ կործանել է, մի տեղ բարգաւաճ է դարձրել:

Թողնելով այս գառնամ դէպի ուղեգրութեանս մի այլ նկատողութիւն:

Աարսը որովհետև չունէր կազմակերպեալ առաջնորդական դիւան, որ առանց սրբազան առաջնորդին ձանձրոյթ պատճառելու կարողանայի վիճակի մասին հարկաւոր տեղեկութիւնները ստանալ՝ Արբազանի հետ այդ մասին խօսելով շատացանք. խօսակցութեանց ժամանակ ևս իմացայ որ Աարսայ վիճակի մէջ կան մի քանի քաղաքներ իւրեանց շրջակայքով և ամբողջ շիրակայ արեւմտեան մասն, որ վերջին ժամանակներս Արշարունիքի մի քանի գիւղերի հետ առանձին գործակալութիւն դարձաւ և յանձնուեց Հոռոմնսի վանուց վանահօր ընդ տեսչութեամբ Աարսայ առաջնորդի:

Ալէքսանդրապոլ դառնալուց յետոյ մոմավաճառութեան արդիւնքը տեղւոյն դպրոցի օգտին դարձնելու № 3234 ի 19 Մայիսի 1880 ամի Սինօզի հրամանի պատճառով կազմած Հոգ. Կառավարութեան № 42 Մայիսի 26 ին. 1880 թուին սկսած և դեռ չաւարտած գործի մէջ պատեհութիւն ունեցայ տեսնել Աարսայ առաջնորդի թիւ 5 ի 5 Յունվարի 1881 ամի մի գրութիւնը հանդերձ վիճակի գիւղօրէից ցուցակով. այդ ցուցակից, որ ամենից վաւերականն կարելի է համարել ամիոփումեմ հետեւեալը:

Աարսայ վիճակի մէջ կան հետեւեալ քաղաքները իրանց գիւղերով. Աարս, Կաղզուան, Արգահան, Բաթում, Արգուին և Օլթի:

Գիւղերը ըստ այսմ կարելի է ամիոփել. Աարսայ շրջակայքում՝ չորս գիւղ, Կաղզուանի շրջակայքում՝ վեց գիւղ, Արգահանի շրջակայ-

(*) Արարատ 1379, երես 309.

քում մի գիւղ, Արդուինի շրջակայքում՝ երկու գիւղ, Օլթիի շրջակայքում՝ երկու գիւղ, Կաւառներն են Բասեան՝ երկու գեղով, Շաւշէտի կողմանք՝ երկու գիւղ, բոլորը՝ վեց քաղաք, 19 (տասն և ինն) գիւղ, որ ենթարկւում են Աարսայ առաջնորդի իշխանութեան և մատակարարում են իրանց հոգևոր տուրքերը Աարսայ առաջնորդարանին, Բացի վերոյգրեալները Աարսայ առաջնորդի ցուցակում զրուած են և հեռեկալ գիւղերը հին Արշարունիքում այժմեան Նախիջևանի կողմանք՝ ութն գիւղ, արևմտեան Շիրակ՝ ըստ այսմ. Անույ կողմանք՝ եօթն գիւղ, Շօրագէլի կողմանք՝ տասն և ութ գիւղ, բոլորը երեսուն և երեք գիւղ, որ թէև Աարսայ առաջնորդի բարձրագոյն իրաւասութեան են ենթարկւում, բայց իրրև առանձին գործակալութիւն յանձնուած են Հոռոմոսի վանուց վանահօրը, որ իւր պաշտօնական յարաբերութիւնները, զրամաւորը Սինօղի հետ ունի, դիւանականը՝ Ալէքսանդրապօլու Հոգևառաւարութեան, իսկ վարչականը՝ Աարսայ առաջնորդի հետ. Աերջապէս Աարսայ թեմի բոլոր հայաբնակ գիւղերը յիսուն և երկու հաս են. որոնցից եկեղեցիք չունին Արդահան քաղաքը և իւր Սամչելիք գիւղը, Օլթիի Էօրթիւլու գիւղը, և արևմտեան Շիրակայ Գեօրխանայ, Մէվրէկ և Արագի գեղերը:

Երբ վերջին անգամ իմ հրատեղւոր մատուցանելու համար ներկայացայ Գրիգորիս Սրբազանին, տեսայ մի քանի Տաճկաստանցի կանայք և այր մարդիկ, որոնք օժանդակութիւն էին խնդրում Նորին Սրբազնութիւնից կամ հայրենիք դառնալու, կամ հայրենիքում ունեցած պարտքը վճարելու ևլն:

Բաւական ժամանակ է որ Ռուսաց Հայաստանը Տաճկահայոց համար այն հրապոյրն ունի, ինչ որ Ռուսաստանը Սաւրիգեղցիների համար. այսպէս ամեն մինը թէ նորապսակ այր, թէ նոր ձեռնադրուած քահանայ, թէ որդւոց և զաւակաց տէր մարդ զանց առնելով իւրեանց պարտականութիւնները, գալիս են ռուսաստան նոյն երզը երգելու,— մուրացկանութիւն անելու. Այդ մուրացկանները քաջալերիչ են գրտնում իրանց երկրի առաջնորդներին, որոնք մի մի վկայական տալով ուղարկում են փող հաւաքելու. Տեղական առաջնորդները միայն վրկայականով չեն բաւականանում, նորա շրջաբերական կաթուղիկեայց թղթեր էլ են տալիս «առ համօրէն ազգն» ուղղելով. և այդ տեսակ թղթերով մարդիկը պատուհաս են դառնում տաճկաստանին սահմանակից գաւառների հոգևոր պաշտօնէից զլիին, որոնք տառապում են այդ էրք ու բարաթով եկած մուրացկանների ձեռքին, այս տեսակ տառապանքի մէջ էր նորին սրբազնութիւն Գրիգորիս եպիսկոպոսը, Ակայեալ մուրացկանները աւելի Վանայ գաւառիցն են լինում, որ աշխարհ հոտացրել են իրանց վայնասունով. Ալաշկերտը քանդուեց, վանեցիք են լաց լինում. Ալաշկերտիք սովով կոտորուեցին, վանեցիք համարձակւում եմ ասել, յղփացան յանուն սովելոց հաւաքուած գրամները

լի առատ վայելելով, Պէտք է ասել որ մանաւանդ վանայ շրջակայքի հոգևորականք ազգի դէպ ի իրանց ունեցած վստահութիւնը շարաշար են գործածում, որովհետև ամենից աւելի գոքա են շրջաբերական կոնգակներ տալիս: Մի ժողովուրդ, որ առանց բացառութեան մուրացկան է, պատիժ ու պատուհաս է ազգի գլխին և ամօթ ու նախատինք օտարներին առաջ: Ես չըզդիտեմ թէ Ղարսայ առաջնորդը ինչ տրամադրութեան մէջ է լինում վկայեալ աղքատներին հանդիպելիս, բայց ևս իմ կողմից ասելով նզովում եմ շար բաղդը, որ շարունակ թշուառների հետ յարաբերութիւն պէտք է ունենանք և շարունակ արտասուներ սրբենք: Համբերութիւն բարեմաղթելով վերջ տուինք մենք մեր հրաժեշտին, որովհետև այդ եղաւ մեր խօսակցութեան առարկան, թէպէտ և բաղդի բերմամբ երկուսիս էլ, այսինքն Գրիգորիս սրբաղանի և իմ անուանակոչութեան տօն էլ էր, (այդ օրը Ս. Լուսաւորչի Արդոց և Թոռանց տօնն էր) բայց մենք զբաղուած լինելով այդ խօսակցութեամբ՝ մոռացանք սովորական տօն շնորհաւորելը: Ղարսայ առաջնորդաբանից վերադառնալով մեր հիւրընկալի մօտ պատրաստուեցինք ճանապարհընկնելու և ճաշու 12-րդ ժամին քաղաքից դուրս եկանք հետզհետէ մեր քամակը թողնելով քաղաքը Ղարադաղի ամրոցը, որի համար տեղացիք պատմութեն որ Թերուզովը ասած լինի. եթէ Ղարադաղը իմն լինէր, ոսկուց կշինէի, ալ մահուտով կրպատէի:

Քաղաքից մի վերստ հազիւ էինք հեռացել, մեր երկու կողմը տարածվումէին հասկալից հացաբոյսերի արտերը և մեր առաջին բացվումէր մի կանաչազարդ հարթավայր, թէև ոչ շատ ընդարձակ, բայց շատ հրապուրելի: Այդ հարթավայրը սկսվումէ Ղարս քաղաքից և վերջանումէ արևելեան կողմից՝ Եահնիլար ըլրակներով և հարաւային կողմից՝ Հաջի — խալիլ (?) լեռների շղթայով: Այդ հարթավայրն է Ղարսայ աւանդական դուղը, որ իւր կանաչազարդ ու ծաղկաւէտ մարդերով մատակարարումէ հիւթ Ղարսայ համբաււոր մեղրի ժեղունքին: Այդ դուղին մենք հասանք Ս. Սարապետի ուխտաւորներին, որոնք օգելից ըմպելիների դորութեամբ ոգևորուած յամրընթաց վերադառնումէին հայրենիք և խառն ի խառն երգում աչք Ղարիպի խաղի այն տունը՝ որի մէջ նկարագրած է նորա Հալէպից հրաշքով մի օրուայ մէջ Թիֆլիս դառնալը և Ղարսայ դուղում վերջինքի (իրիկնապահ) աղօթք անելը:

Քաղցուալից ուխտաւորները Ղարսում կոխ յարուցանելով մէկի կուռը վիրաւորել էին: Ուխտաւորների կարաւանին առաջնորդումէր Ղլաւուզը (ուղեցոյց, կարապետ) խաչազարդ դրօշակը ձեռքին: Մեր կողքը նոցա կողքից անցնելիս, երբ «ուխտներդ ընդունելի» բառերն էինք մրմնջում, անիւների թողին հասան նոցա հայհոյալից խօսքերը, իսկ մեր ակամքին՝ նոցա ժխորային ձայնը:

Մենք վերադարձանք նոյն ճանապարհով՝ որով հեռացել էինք Ալէքսանդրապոլից և երեկոյեան 10-րդ ժամին արդէն մեր բնակարաններումն

էինք, Ես զանց եմ անում ճանապարհին մեզ պատահած դէպքերը ի զիր անունով, որչափ և նորա ճանապարհորդութեան ազը լինէին:

Աղեղրութիւնս սկսաւ Ալէքսանդրապօլից, և ես կամենում եմ նորանով էլ վերջացնել մի քանի կարեւոր վիճակագրական տեղեկութիւններ հաղորդելով, որք ըստ իս, հարկաւոր են: Տեղեկութիւնները ես համառօտել եմ Ալէքսանդրապօլու հոգևոր կառավարութեան գործերից և 1881 թուին են պատկանում:

Այդ թուի չափաբերական մատենաներից երևումէ որ ամբողջ վիճակի մէջ եղել են վիճակային արդիւնք:

	Գուրի	Պօպ.
Ա. Աթոռահաս	3042	85
Բ. Հոգևրաժին	541	90
Գ. Լուսաղին	77	84
Դ. Մատաղակաշիք	92	40
Ե. Գին վաճառեալ պտղեաց	952	20
Գումար	4707	19

Այս հաշուի մէջ չեն մտած մնացեալ մեծ մասը անվաճառ պտղի ցորենի և գարու, Էջմիածնական կրպակների վարձք, կէկղեցական մատենաների գները և Արարատի բաժանորդագիրը:

Եղել են պսակ 772

Անուանք	Արական	Իգական	Գումար
Ծնունդ	1979	2044	4023
Մահ	1064	1001	2065
Ննջեցելոց թիւը հանելով՝ աւելացած	915	1043	1958

Ծննդոց մէջ երեք հատն արական երեք հատն էլ իգական ապօրինի են. ինչպէս տեսնվումէ աղիւսակի մէջ՝ Ալէքսանդրապօլի գաւառում արականաց ծնունդը իգականներից պակաս է 65 հատով, իսկ մահով աւելի 63 հատով. և 1881 թուին աւելացել են 128 անձինք իգական սեռից:

Ալէքսանդրապօլի վիճակը՝ նայելով իւր աշխարհագրական դրութեան չորս մասն է բաժանվում, երկուսը արևելեան Շիրակի մէջ և կոչվում են վերին Շիրակ՝ հիւսիսային արևելեան կողմը՝ և ներքին Շիրակ հարաւային արևմտեան կողմը: Իլլոյ մասը Շիրակի հիւսիսային կողմն է գտնվում, իսկ Փամբակը՝ արևելեան կողմը: Այդ չորս մասերի ստորաբաժանումները հարկաւոր զիտելիքներով ղետեղուած են հետեւալ աղիւսակում:

Ալէքսանդրապօլի մասին գրած վերջին այս տեղեկութիւնները իրրև յաւելուած կցելով ճանապարհորդութեանս՝ հարկաւոր եմ համարում յիշել որ ես ըստ իմ կարեաց աշխատել եմ բոլոր նկատողութիւններս պատմական մասին հաւատարիմ աղբիւրների վերայ հիմնել, իսկ նրկարագրականը իմ անձնական մանրակրկիտ նկատողութեան վերայ:

Այո՛, նայելով իմ կարծօրեայ ճանապարհորդութեանը, նկատողութիւններս շատ երկարեցին. բայց պէտք է ասել որ ես նախապէս հարկաւոր խորհրդածութիւնները ծրագրած ունէի, իսկ կատարած ճանապարհորդութիւնս միմիայն ստուգութեան համար էր:

Ճանապարհորդների նկարագրութիւնները, ականատես անձանց պատմութիւնները և լրագրական յօդուածները ինձ հարկաւոր տեղեկութիւնները մատակարարել էին. ես այդ ամեն տեղեկութեանց յաւելացրի իմ վերայ եղած սպաւորութիւնները:

Այն մարդիկը, որոնց հետ ես բաղդ ունեցայ ծանօթանալու, որոնք յօժարակամ ուղեկցեցին ինձ Ղարսը տեսնելու, պէտք է զարմանային թէ ես, որ այնքան թեթեւ կերպով էի մտիկ անում նոցա պատմածներին ու ցոյց տուածներին, ի՞նչպէս կարողացայ այս երկար նկատողութիւնները գրել, բայց երբ նոքա կը կարդան մի քիչ վերև գրած առղերը կարծեմ զարմանալու ոչինչ առիթ չեն ունենալ:

Իմ նկատողութիւնների մէջ այնպիսի բաց տեղեր կան, որոնց մասին ես ցաւում եմ, այնպիսի պակասներ կան, որ ինձ տագնապում են, սակայն ոչ սակաւ տագնապ էր ինձ համար, երբ մտածում էի որ եթէ իմ նկատածներս իսկոյն նշանակեմ, ցոյց տալ պէտք է կոչուում եմ, այդ տագնապը չը կրելու համար, ես չը նշանակեցի եկեղեցու շինութեան թուականը, երկար կանգ չառայ հին Ղարսի պարսպի հարաւային դրան ճակատի դուռակները զննելու, հայերէն արձանագրութիւնը կարգալու և հարկաւոր տեղեկութիւնները նշանակելու ձեռատետրիս մէջ, ես իմ կողմից հարցեր գրեթէ չառաջարկեցի, ինչ որ պատահեց մեզ, ինչ որ պատմեցին, նորանով շատացայ:

Ես վերջացնում եմ իմ նկատողութիւնները դարձեալ խոստանալով գրել, ինչ որ նկատողութեան արժանի համարեմ՝ պատահական թէ մտադրեալ ճանապարհորդութիւնների ժամանակ: